ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱԳՐԵՐ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ ՎԱՆՔԻՑ

Հայերեն վիմական արձանագրություններում զգալի թիվ են կազմում տապանագրերը: Դրանք հիմնականում տեղեկություններ են հաղորդում ննջեցյալի անվան, տոհմի, բնակության վայրի, մահվան հանգամանքների, կենցաղի, ունեցած նախասիրությունների (վերջիններս հաճախ արտահայտվում են պատկերաքանդակների տեսքով) եւ այլնի վերաբերյալ[1]:

Հայ իրականության մեջ հնագույն դամբարանային ձեւերը հայտնի են դեռեւս նեոլիթյան ժամանակաշրջանից: Հազարամյակների ընթացքում դրանք ունեցել են տարբեր ձեւեր. կրոմլեխներ, դոլմեններ, կուրգաններ, քարարկղային, սալարկղային դամբարաններ, կարասային, սարկոֆագային թաղումներ եւ այլն: Ժամանակի ընթացքում փոփոխման է ենթարկվել նաեւ գերեզմանի արտաքին ձեւը: Ննջեցյալին հողով ծածկելուց հետո վրան դրվել է մշակված քարից տապանաքար, ինչից էլ սկսվել է վերերկրյա հուշարձանի ձեւավորումը[2]:

Հայաստանում վաղ քրիստոնեական շրջանի գերեզմանական հուշարձանները եղել են քառակող կոթողները (Գառնահովիտ, Դվին), որոնց վրա քանդակվել են հեթանոսական, ապա քրիստոնեական մոտիվներով տեսարաններ[3]: Քառակող կոթողներին ժամանակագրորեն հաջորդում են երկթեք կամ կափարիչի ձեւ ունեցող գերեզմանական հուշարձանները (Դվին, Թալին): Վերջինիս լավագույն օրինակ է նաեւ Վաղարշապատի՝ Ե - Զ դարերով թվագրվող բազիլիկ եկեղեցու՝ 1979 թ. պեղումների ժամանակ հայտնաբերված տապանաքարը՝ բոլորգիր երկաթագրով արձանագրությամբ: Տապանագրում հիշատակված է հայ նախարարական նշանավոր Առավեղյան տոհմից Խեչան Առավեղյանը[4]:

Թ - Ժ դարերից ի հայտ են գալիս եւ արդեն զարգացած միջնադարում լայն տարածում ստանում հարթ ուղղանկյունաձեւ (Նորավանք, Կեչառիս, Թեժառույք, Տող), օրորոցաձեւ (Նորատուս, Զագավանք, Վաղարշապատ), երկլանջ (Վաղարշապատ, Թալին, Թեղենյաց վանք), իսկ ԺԴ դարից՝ կենդանակերպ (խոյի, ձիու տեսքով. Թեղենյաց վանք, Ջուղա)

1 Տապանագրերի մասին տե՛ս **Ն. Ադոնցի,** Հայերէն տապանագիրներու արժեքը, Բազմավէպ, 1934, թ. 4, էջ 166-168, նաեւ Գ. Հնասէր, Հայ գրականութիւնը տապանաքարերու վրայ, Բազմավէպ, 1928, թ. 11-12, էջ 339-345, 1929, թ. 1, էջ 17-22, թ. 2, էջ 43-46, թ. 5, էջ 149-151, թ. 7-8, էջ 229-232:

2 Տե՛ս **Ս. Գ. Բարխուդարյան, Գ. Ն. Կարսախանյան,** Հայկական գերեզմանական հուշարձանները եւ նրանց քանդակները, ՊԲՀ, 1954, թ. 4, էջ 196:

3 Քառակող կոթողների մասին մանրամասն տե՛ս Բ. Ն. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ., Երեւան, 1949:

4 Տե՛ս **Գ. Ն. Կարսախանյան, Գ. Գ. Սարգսյան, Ն. Ա. Մելքոնյան, Պ. Պ. Հարությունյան,** Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1992, թ. 2, էջ 160:

տապանաքարերը: Վերոնշյալ տեսակների տապանաքարերի քանդակային ձևերը առավել զարգանում ու կատարելության են հասնում ուշ միջնադարում՝ մասնավորապես ԺԷ - ԺԸ դարերում: Այս դարաշրջաններից մեզ են հասել մեծաքանակ տապանաքարեր, որոնց մեծ մասն արձանագրված են ու հարուստ են պատկերաքանդակներով: Տապանաքարերի պատկերագրությանը մենք չենք անդրադառնա՝ ներկա հոդվածի թեմայի շրջանակներից դուրս լինելու պատճառով, այլ կխոսենք որոշ նորահայտ տապանագրերի մասին, որոնք ընդօրինակել ենք վերջերս՝ Վաղարշապատի Ս. Հռիփսիմեի վանքի գերեզմանատնից:

Ս. Հռիփսիմեի վանքը դեռևս Է դարում հիմնովին վերաշինել ու ճարտարապետական կատարելության է հասցրել Կոմիտաս Ա Աղցեցի (615 - 628) Կաթողիկոսը: Այդ են վկայում վերջինիս վերաբերող, հնագրորեն Է դարին բնորոշ երկաթագրով փորագրված վիմական երկու արձանագրությունները. մեկը՝ վանքի արտաքուստ արևմտ.յան պատին՝ զանգակատան եզնամասում, իսկ մյուսը ներսում՝ ավագ խորանի կենտրոնական հատվածում[5]:

Ուշ միջնադարում՝ Փիլիպպոս Ա Աղբակեցի (1633 - 1655) Կաթողիկոսը գրեթե ամբողջովին վերանորոգում է անմխիթար վիճակում գտնվող Ս. Հռիփսիմեի եւ Ս. Գայանեի վանքերը: Այդ մասին արձանագրվել է Ս. Հռիփսիմեի վանքի արևմտ.յան պատին՝ արտաքուստ ագուցված գեղաքանդակ խաչքարի ստորին մասում: Հետագա տարիներին վանքն ավելի է բարեկարգվում՝ շնորհիվ կաթողիկոսներ Սիմեոն Ա Երեւանցու (1763 - 1780), որ հիմնովին վերաշինում է վանքի արտաքին պարիսպը, եւ Ղուկաս Ա Կարնեցու (1780 - 1799), որ վանքի արևմտ.յան մուտքին կից փոքր գավթի վրա կառուցում է զանգակատունը:

Վանքը ծաղկում է ապրել ուշ միջնադարում՝ մասնավորապես ԺԷ - ԺԸ դարերում, ինչի մասին են վկայում բազմաթիվ վիմագրերը (շինարարական, նվիրատվական), այդ թվում վանքին կից գերեզմանատան տապանագրերը, որոնցում հիշատակվում են վանքի միաբանների անունները: Մեծաքանակ տապանաքարերի առկայությունը վկայում է, որ վանքն ունեցել է հզոր ու բազմամարդ միաբանություն ու ապրել աշխույժ կրոնական կյանքով: Գերեզմանատանն առկա են մոտ հիսուն տապանաքարեր, շուրջ երեսունն արձանագիր, որոնց մեջ առկա են նաեւ եղծված, տեղ-տեղ կոտրված ու անընթեռնելի տապանագրեր (վերջիններս կքննարկենք հետագա ուսումնասիրություններում): Ներկա հոդվածում կդիտարկենք համեմատաբար լավ պահպանված տասնհինգ տապանագրեր, որոնց մեծ մասն առաջին անգամ են հրատարակվում: Դրանք որոշակիորեն ընդլայնում են մեր պատկերացումները Ս. Հռիփսիմեի վանքի՝ ուշմիջնադարյան կրոնական կյանքի վերաբերյալ:

Գերեզմանատունը գտնվում է վանքի արեւելյան պարսպի երկու կողմերում (նկ. 1): Նախ ներկայացնենք պարսպապատից ներս գտնվող յոթ տապանագրերը, որոնցից երկուսը հրատարակված են Հովհաննես Շահխաթունյանցի ու Ղեւոնդ Ալիշանի տեղագրություններում: Վերջիններս այժմ տեղ - տեղ եղծված են, ուստի որոշ ուղղումներով մեջբերում ենք ըստ հիշյալ տեղագիրների.

Տապանաքարերից մեկը օրորոցաձեւ է (1,70 X 0,55), ուր հիշատակվում է աստապատցի Ղազար վարդապետը: Տապանագիրը չափածո է, ունի ներքին հանգավորում:

---

5 Տե՛ս **Գարեգին վարդ. Յովսէփեան,** Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրութիւն. «Արարատ», 1898, հոկտեմբեր, էջ 441-442: Տե՛ս նաեւ **И. А. Орбели,** Избранные труды, Ереван, 1963, էջ 406:

ՏԱՊԱՆՍ ԱՅՍ ԵՒ ՅԱՐԿ ՇԻՐՄԻ, Է ՂԱԶԱՐՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՈՐ ԷՐ ՏԵՂԵԱՒ ԱՍՏԱՊԱՏՅԻ, ՄԵԾԻ ԳԱՀՈՅՍ ՅՈՅԺ ՊԻՏԱՆԻ: ՔԱՋ ԵՐԱԺԻՇՏ ԵՒ ԺԱՄԱՍԱՑ. ՅՈՅԺ ԲԱՆԻԲՈՒՆ ԵՒ ԴԱՍԱՍԱՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԿԱՐԳԱՒՈՐՕՂ, ԺԻՐ ՔԱՐՈԶԻՉ ԵՒ ԺԱՄ ՕՐՀՆՈՂ. ԻՍԿ ԱՍՏ ԱՌԵԱԼ ՁՎԱԽՃԱՆ ԲԱՐԻ՝ ՉԸԻԵԱՑ ԱՌ ՏԷՐՆ ՀԱՄԱՑՆԻ՝ ԱՐԴ ՈՐ ԱՍԷ ՍՄԱ ՈՂՈՐՄԻ՝ Ի ՔՐԻՍՏՈՍԷ ՁՆՈՅՆ ԸՆԿԱԼՑԻ[6]:

Դապելով փապանագրի բովանդակությունից, Ղազար վարդապետը եղել է բազմաշնորհ անձավորություն՝ երաժիշտ, ուսուցիչ, ժամերգություն կատարող եւ այլն:

Մյուս փապանաքարի տակ, ինչպես Ալիշանն է գրում, «թաղեալ կայ անդ եւ քաջ գիտնականն եւ թարգմանիչն Ստեփանոս վարդապետ Լեհացի կոչեցեալ, այսպիսի ունելով փապանագիր».

ՅԱՐԿ Ի ԴԱՄԲԱՐԱՆԻՍ ԵԴԵԱԼ. ՊԱՀԻ ՄԱՐՄԻՆ ՄԱՔՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ, ՈՐ ՏԵՂԵԱՒՆ ԻՍԿ ԷՐ ԼԵՀԱՑԻ. ԱՆԻՒՆ Ի ԳՈՒԲՍ ԱՅՍ ԸՆԿՐԿԻ, ՀԱՋԱՐ ՀԱՐԻՒՐ ԸՆԴ ԵՐԵՄՆԻ, ԿՐԿԻՆ ԲԱՌԻՒ Կ (60) ԹԻՒ ՀԱՅԿԱՋՆԻ. ՈՐ ՀԱՆԴԻՊԻՔ ՏՈՒՔ ՁՈՂՈՐՄԻ. ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՁԵՋ ՈՂՈՐՄԵՍՑԻ[7]:

Գալով Էջմիածին եւ աչքի ընկնելով բազում հմտ.ություններով, Ստեփանոս Լեհացին Փիլիպպոս Աղբակեցի Կաթողիկոսից ստանում է վարդապետական աստիճան: Գերազանց տիրապետելով լատիներենին՝ նա կատարում է մի շարք թարգմանություններ: Վերջինս նաեւ հմուտ նկարիչ էր եւ նկարազարդել է Էջմիածնի Մայր Տաճարի որմերի որոշ հատվածներ: Երբ Հակոբ Դ Ջուղայեցի (1655 - 1680) Կաթողիկոսն ուղեւորվում է Կ. Պոլիս, Ստեփանոսը նշանակվում է փոխանորդ, իսկ նրա մահից հետո (1680)՝ տեղակալ[8]:

Մնացած փապանագրերը հրապարակվում են առաջին անգամ, որոնցից մեկը Մարգար ճգնավորի փապանաքարն է (1, 53 X 0,62), որի վրա փորագրված է փասներկու տողից կազմված հետեւյալ արձանագրությունը.

ԱՅՍ Է ԴԱՄԲԱՐԱՆ/ ՏՈՒՆ ՄՆԻ ՃԳ/ՆԱՁԳԱՑ
ՄԱՐԳ/ԱՐԱ⌈Վ⌉⌊ԱՐ⌋Դ⌊Ա⌋Պ⌊ԵՏ⌋Ի ՈՐ
Է/ Տ⌊Ե⌋Ղ⌊Ի⌋Ս ԱԿՆՅԻ ԵՒ/
ԳԻՂԷՆ ԿՈՉ(Փ)ԵՑ/ ԷԱԼ. ԱՊՈՒՉԵԽՑ/Ի
ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ/ ՏՐ ՌՃԿՁ (1717) ԱՄԻՆ
/ ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ Տ/ՈՒՔ ՈՂՈՐՄԻ ԵՒ
ՏՐՆ/ ՁԵՋ ՈՂՈՐՄԱՑԻ:

(Նկ. 2)

6 Տե՛ս «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ», աշխատասիրութեամբ՝ **Յովհաննու եպս. Շահխաթունեանցի**, հ. առաջին, Ս. Էջմիածին, 1842, էջ 273, նաեւ Դեւոնդ Ալիշան, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 241, Ս. Ա. Գեորգյան, Հայ վիմագիր բանաստեղծությունը (XVIII-XIX դդ.), Երեւան, 1989, էջ 334, արձ. 46:

7 Տե՛ս **Յովհ. եպս. Շահխաթունեանց,** անդ, էջ 272, նաեւ Ղ. Ալիշան, անդ, էջ 241:

8 Տե՛ս **Ղր. Ասաթյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երեւան, 1948, էջ 676-677, նաեւ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 925:

Արձանագրության մեջ Մարգարը հիշատակվում է որպես ճգնազգյաց, այսինքն՝ յուր անձը ճգնության տված, կամ մեկը, որ իր հոգու փրկության համար հրաժարվել է աշխարհից ու նրա վայելքներից եւ իր անձը ենթարկում է տեսակ - տեսակ զրկանքների[9]: Վերջինս Ակնի Ապուչեխ գյուղից է: Համաձայն որոշ տեղեկությունների այս գյուղը հիմնադրվել է ԺԶ դարում Ապուղամր Արծկեցու եւ Բունիաթ Սեբաստացու նախաձեռնությամբ: Գյուղն ունեցել է կանգուն եկեղեցի՝ Վարագա Ս. Նշան անունով: Ապուչեխցիների հիմնական զբաղմունքը եղել է այ-գեգործությունը, ջուլհակությունը, կոշկակարությունը, ատաղձագործությունը եւ այլն[10]: Վիմագրում որոշ տառեր եղծված են, իսկ վեցերորդ տողում «կոչեցեալ» բառը փոքրագրված է «Ֆ» հնչյունի հավելմամբ՝ «կոչֆեցեալ»:

Մյուս տապանաքարը գտնվում է նախորդից աջ (1,54 X 0,58), տապանագիրը կազմված է հինգ տողից.

ԱՅԼՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՄ[ԲԱ]/ՐԱՆԻՅԱԿՈԲ
ԱՆ[ՈՒ]/ԱՄԲ ՎԼԱ/ՐԴԼԱ/ՊԵՏԻ/
ՈՐ Է ՏԵՂԻՍ ՔԱՂԱՔ ԱՂԱՉԵՄ/:

(Նկ. 3)

Տապանագրում նշվում է, որ Հակոբ վարդապետը «ՔԱՂԱՔ»-ից է: Քաղաք անու-նով Արեւմտ.յան Հայաստանում երկու գյուղ ունենք, մեկը՝ Բիթլիսի նահանգի Մուշ գա-վառում, մյուսը՝ Էրզրումի նահանգում[11]: Վաղարշապատը տարբեր ժամանակներում կոչվել է նաեւ Մայրաքաղաք, Նորաքաղաք, Նոր Քաղաք[12] անուններով: Ըստ այդմ, կարծում ենք, որ Հակոբ վարդապետը տեղացի է, բուն Վաղարշապատ քաղաքից, ուստի եւ «ՈՐ Է ՏԵՂԻՍ ՔԱՂԱՔ» ասելով փոքագրողը նկատի է ունեցել հենց Վաղարշապատը: Նույն շարքում է նաեւ Ավետիս վարդապետի տապանաքարը (1,54 X 0,50), արձանագրությունը տասը տողից է.

Ռ Մ Ժ Ա (1762) /ԱՆԻՒՆ Ի ԳՈՒԲՍ
ԸՆԿՐԿԵՍՑԻ ԱՐ/ՁԱՆՍ ԱՅՍ
ՆԸ/ԾԱՆ ԿԱՆԿՆԻ ԱՒԵՏԻՍ/
ԱՆՈՒՆ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]ՏԻ/
ՈՐ ԷՐ ՅԱ[ՌԱ]Ջ[Ն]ՈՐԴ ՍԲՅ/
ՈՒԽՏԻՍ ՈՐՔ ՏԱՆ/ԴԻՊԻՔ ՏՈՒՔ
ՁՈՂՈՐ/ՄԻ ԱՄ Ե[Ի]ՁԵՋ ՈՂ[Ո]
ՐՄ[ԵՍ]ՅԻ:

(Նկ. 4)

9 «Հայերէն բացատրական բառարան», կազմեց՝ **Սպ. Մալխասեանց,** հ. երրորդ, Երեւան, 1944, էջ 205:
10 Տեմ «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Երեւան, 1986, էջ 314:
11 Տեմ անդ, հ. 5, Երեւան, 2001, էջ 291:
12 Տեմ անդ, հ. 4, Երեւան, 1998, էջ 34:

Ըստ տապանագրի՝ Ավետիս վարդապետը վանքի առաջնորդներից է, որի հո-գու խաղաղության համար «հանդիպողներից» հայցվում է ողորմածություն: Հետաքր-քիր է շարադրված տապանագրի սկզբնամասը՝ «ԱՆԻՒՆ Ի ԳՈՒԲՍ ԸՆԿՐԿԵՍՑԻ», այս-ինքն՝ անուն, որ ընկրկել է գուբի՝ փոսի, վիհի, խորխորատի[13] մեջ:

Մեկ այլ տապանագրում, որ փորագրված է նախորդից ձախ գտնվող տապա-նաքարին (1,55 X 0,65), հիշատակվում է նորքեցի պարոն Գասպարը.

ՐԾ ՆՈՐՀՕՔՆ ԱԾ ԱՅՍ Է/ ՏԱՊԱՆ ՆՈՐՔԸՑԻ / ԳԱՍՊԱՐ ՊԱՐՈՆՏԷ/ՐԻՆ ՈՐ Է ԵՂԲԱՅՐ/ ՆԵՐՍԷՍ ՊԱՐՈՆՏԷՐԻ/ ՎԱՂՃԱՆԵՑԱՒ ԹՎԼԻՆ/ ՌՃԾԸ (1709) ՄԱՅԻՍ ԻԳ (23):

(Նկ. 5)

Ներսես պարոնի որդի Գասպարը, որ նաև հիշատակված է «պարոնտէր» պատվանվամբ, հավանաբար նշանավոր տան զավակ է, քանզի դեռ Կիլիկյան շրջանում նման հարգական տիտղոսով կոչում էին ազնվական կալվածատերերին, տան մեծավորներին, իսկ ավելի ուշ այս տիտղոսին զուգահեռ կիրառական է եղել «բարոն» պատվանունը[14]: Գասպար պարոնը նորքեցի է, իսկ Նորք անունով գյուղեր կան Արևմտ.յան Հայաստանի Բիթլիսի նահանգում, Նախիջևանի, Շիրակի, Արագածոտնի գավառներում, Երևանի խանության Կըրխբուլաղի մահալում, որը 1837 թվականից Երևան քաղաքի մասն է կազմում: Կարծում ենք, որ Գասպար պարոնը Երևանի Նորքից է՝ հաշվի առնելով Երևանի եւ Վաղարշապատի միջև եղած կապը: Բացի այդ, Նորքը հայտնի է որպես մշակութային օջախ, ունի կավի պաշարներ, այստեղ զարգացած է եղել գինեգործությունը, երկրագործությունը, կավագործությունը եւ այլն[15]: Չի բացառվում, որ Ներսես պարոնտերը բարձր դիրք ունեցող անձ է եղել հենց այս տարածքում, որի պատվանունն էլ հետագայում ժառանգել է որդին՝ Գասպարը:

Հաջորդը օրորոցաձև տապանաքար է (1,41 X 0,46), ինքնեցյալի անունը փո-րագրված է տապանաքարի արևմտ.յան, իսկ բուն տապանագիրը հարավային կող-մում: Տապանագիրը եղծված է, միայն անխաթար մնացած որոշ բառերից հասկանալի է դառնում, որ Հարությունը

13 Տե՛ս **Ռ. Մ. Դաղարեան,** Գրաբարի բառարան, հ. Ա, Եր., 2000, էջ 339:

14 Տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց՝ **Սպ. Մալխասեանց,** հ. չորրորդ, Երեւան, 1945, էջ 86, նաեւ **Հր. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երեւան, 1979, էջ 65:

15 Տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 4, էջ 33:

եղել է Ս. Հռիփսիմեի վանքի վանահայրը, միաժամանակ կապեր ունեցել նաեւ Էջմիածնի Մայր Տաճարի հետ.

...Ի....ՅԻ..ՅԻ/....ԳԵՂՆԵ.Լ.Ե.ՂՅԻ/
ՏԱ...ՂԱՄ.Յ.ՀԱՆԳԱՒ Ի...
ՎԱՆԱՀՕՐ ՀՌԻՓՍԻՄԷԻ...../ .ԷՆ .(Վ)ԴԱՊ
ԱՒՐՈՆՕՂԻ./ ՏԱՃԱՐԻՆ ԷՋՄԻԱԾՆԻ/.
ԱՂՈՒ ԱՆՈՒԱՄԲ ՄԵԾ⌈Ա⌉Պ⌊ԱՏԻՒ⌋./ ՅԱՐԴԵԱՆ
ՅԵՂԲԱՐՑ ԱՄԵՆԻ:ՅԱՐՈՒԹԻՆ:

(Նկ. 6)

Շուրջ տասը տապանագրեր ենք ընդօրինակել նաեւ վանքի արեւելյան պա-ռսպից դուրս գտնվող գերեզմանատնից: Դրանք հիմնականում վարդապետների, տի-րացուների տապանաքարեր են, որոնցից մեկը՝ երկլեզվյան չափածո եւ արձակ արձանագրությամբ՝ հայերեն եւ վրացերեն, որին կանդրադառնանք ստորեւ:

Այստեղ է թաղված նաեւ Հակոբ Դ. Ջուղայեցի Կաթողիկոսի (1655 - 1680) եղբայր Եսային: Նրա տապանաքարն (1,95 X 0,50) ունի հետեւյալ արձանագրությունը.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/⌈Ջ⌉ՈՒՂԱԵՑԻ/
ՅԵՍԱՈՒՆ Ո⌈Ր⌉/⌈Է⌉ԵՂԲԱՅՐ/
⌈Յ⌉ԱԿՈԲ Կ⌊Ա⌋Թ⌊Ո⌋Ղ⌊ԻԿՈ⌋Ս⌊Ի⌋Ն/
ՌՃԵ (1656) ԹՈՒԻՆ:

(Նկ. 7)

Սիմեոն Երեւանցին գրում է, որ Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսն իր փոխանորդ Եսայու միջոցով հայտ է ներկայացնում Սուլթան Մուհամադին, թե Վան քաղաքն իր գավառներով, նաեւ Դիարբեքիրը, Արճեշը, Խլաթը, Մուշը, Բաղեշը, Խոշաբը եւ սրանց շրջակա մյուս վայրերը հնուց ի վեր եղել են Էջմիածնի վիճակ, սակայն Աղթամարի Մարտիրոս Կաթողիկոսը երբեմն ոտնձգություն է կատարում: Ընդառաջելով Ջուղայեցու խնդրանքին, թագավորը հրաման է արձակում՝ ուղղված Վանի փաշային, որպեսզի կանխի Մարտիրոս Կաթողիկոսի նման քայլերը[16]:

Մ. Օրմանյանը ԺԷ դարի շինարար վարդապետների կազմում հիշատակում է նաեւ

16 Տես **Սիմեոն Ա Երեւանցի,** Ջամբռ, Երեւան, 2003, էջ 332:

Եսայի վարդապետ Մեղրեցուն՝ Երնջակ գավառի Ս. Կարապետի վանքի առաջ-նորդին, որ «աւերեալ եկեղեցին, տունները, խուցերը եւ պարիսպները՝ բոլորովին քանդելով նորէն վերաշինեց աւելի ընդարձակ կերպով, եւ 1653 հոկտեմբեր 17-ին ե-կեղեցւոյն նաւակատիքը կատարեց»[17]:

Տեղագիրներից Մեսրոպ Սմբատյանցը նշում է, որ ուշ միջնադարում վանքը նորոգել են Եսայի եւ Ղազար վարդապետները, որի մասին վանքի հյուսիսարեւելյան որմի ճակատային մասում փորագրված է հետեւյալ արձանագրությունը.

ԵՍԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՆՈՂ ԹՎԻՆ ՌՃԴ (1655)[18]:

Այստեղ «շինող» բառեզրը գործածվել է «վերականգնող», «նորոգող» իմաստով: 1653 - 1656 թթ. կատարված վերանորոգումների ժամանակ, հիշյալ վարդապետների մեկենասությամբ են կառուցվել նաեւ Ս. Կարապետի վանքի զանգակա-տունն ու Ս. Ստեփանոս մատուռը[19]:

Բացի այդ, վանքի խորաններից մեկում պահվող արծաթյա տուփի վրա կա հետեւյալ արձանագրությունը.

ԱՅՍ Է ՆՇԽԱՐ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՈՐ ԸՆԾԱՅԵԱՅ ՋՈՒՂԱՅԵՑԻ ՅԱԿՈԲ ԿԱԹՈՒ-ՂԻԿՈՍԻՆ, ԵՐՆՋԱԿԱՅ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՈՐ Է ԲԱՐԷԽՕՍ ԻՒՐ ՈՒԽՏԱՒՈՐԱՅ, ՅԻՇԱՏԱԿ ԵՍԱՅԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԹՎԻՆ ՌՃԵ (1656)[20]:

Ակնհայտ է, որ 1656 թվականին Եսայի վարդապետը մահացել է:

Կարծում ենք, որ վերոհիշյալ Եսայի Մեղրեցին տապանագրում հիշված Եսայի Ջուղայեցին է (Մեղրիի ու Ջուղայի միջեւ եղած մոտակա հեռավորությունը հաշվի առնելով): Նա մինչ Հակոբ Ջուղայեցու Կաթողիկոս օծվելը եղել է նշանավոր անձ՝ բաբունապետ, վարդապետ եւ բեղուն գործունեություն ծավալել Երնջակ գավառի Ս. Կարապետի վանքում: Ամենայն հավանականությամբ, 1655 թվականին, երբ Հակոբ Դ Ջուղայեցին օծվում է Կաթողիկոս, Եսային տեղափոխվում է Էջմիածին ու նշանակվում կաթողիկոսական փոխանորդ, սակայն մեկ տարի հետո վախճանվում ու պատիվ է ունենում թաղվելու Ս. Հռիփսիմեի վանքի գերեզմանատանը:

Այս գերեզմանատանն են թաղված նաեւ Խաչատուր, Թորոման, Ալեքսան, Ան-տոն վարդապետները: Դատելով տապանագրերի բովանդակությունից վերջիններս եղել են վանքի միաբաններ: Տապանագրերը եւ դրանց վերծանությունները բերում ենք ստորեւ:

---

17 Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, Բ հատ., Ս. Էջմիածին, էջ 2897, նաեւ Առաքել Դաւրիժեցի, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 281-282:

18 «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորայ», գրեց Մեսրովբ արք. Սմբատեանց, Տփխիս, 1904, էջ 4, նաեւ Արգամ Այվազյան, Նախիջեւանի վիմագրական ժառանգությունը, հ. Դ, Երնջակ գավառ, Երեւան, 2008, էջ 15, արձ. 4:

19 Տե՛ս «Նախիջեւանի ԻՍՄՀ հայկական հուշարձանները» (համահավաք ցուցակ), աշխատասիրությամբ՝ Արգամ Այվազյանի, Երեւան, 1986, էջ 98-99: Եսայի վարդապետի շինարարական գործունեության մասին բազում վկայություններ կան նաեւ ԺԷ դարի հիշատակարաններում, տե՛ս «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Գ, կազմեց Վազգեն Հակոբյան, Երեւան, 1984:

20 Տե՛ս «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա», էջ 11, նաեւ Արգամ Այվազյան, Նախիջեւանի վիմագրական ժառանգությունը, հ. Դ, էջ 17, արձ. 23:

Տապանաքար Ալեքսան վարդապետի (1,30 X 0,60), 5 տող.

ՅԻ ՈՐԴԻ ՀՕՐ ՄԻԱԾԻՆ/ ՀԱՆԳՈՅ
ՀՈԳԻՆ ԱԼԷ/ՔՍԱՆ ՎԱԼՐԴԱՊԵՏԻՆ
ՈՐ Է/Ր Ի ԱՅ ՍԲ ՈՒԽՏԻՍ/ ՌՄԻԵ (1776):

(Նկ. 8)

Տապանաքար Թորոման վարդապետի (1,30 X 0,50), 6 տող.

ՔՍ ՈՐԴԻ ՀՕՐ Մ/ԻԱԾԻՆ ՀԱԼՆԳՈՅ/
ՀՈԳԻՆ ԹՈՐՈՄԱԼՆ/[ՎԱ]/ՐԴԱՊԵՏԻՆ
ՈՐ Է ՄԻ/ԱՅԲԱՆ ՍԲ ՈՒԽՏԻՍ/
ՌՄԻԵ (1776):

(Նկ. 9)

Տապանաքար Խաչատուրի (1,50 X 0,65), 3 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽԱ/Չ[Ա]ՏՈՒՐԻՆ
ՈՐ Է ՈՐԴԻ/ ՄՈՒՔԷԼԻՆ
ՌՄԻԵ (1776):

(Նկ. 10)

Տապանաքար Անտոն վարդապետի (1,33 X 0,43), 6 տող.

ՅԻ ՈՐ ԴԻՀՕՐԻ
ՀԱԳՈՅ ՀՈԳԻ
ԱՆՏՕՆ ՎԱՐԴԷ
ՏԻ ՈՐԷ ԼՈՍԱ
ՍԲ ՈՒԽՏԻՍ
ԹՎԻՆՈՒՄԼԱ

ՅԻ ՈՐԴԻ ՀՕՐ ՄԻ/[ԱԾԻՆ] ՀԱԼՆ]ԳՈՅ
ՀՈԳԻՆ/ ԱՆՏՕՆ [ՎԱ]ՐԴԱ]ՊԵ/ՏԻՆ ՈՐ Է
ԼՈՍԱՐ[ԱՐ]/ ՍԲ ՈՒԽՏԻՍ/ ԹՎԻՆ ՌՄԼԱ (1782):

(Նկ. 11)

Ըստ տապանագրի՝ Անտոն վարդապետը եղել է վանքի լուսարարը, այսինքն՝ եկեղեցու պաշտոնյաներից մեկը, որ հսկում է եկեղեցու ներքին բարեզարդության, կարգ ու կանոնի, մաքրության, լուսավորության, զգեստավորման եւ այլնի վրա[21]:

Վերոնշյալ տապանագրերն աչքի են ընկնում շարադրման սկզբնամասի յուրօրինակ ձեւակերպմամբ, այն է՝ «ՔՍ կամ ՅԻ ՈՐԴԻ ՀՕՐ ՄԻԱԾԻՆ», որը կարծես իր մեջ ամփոփում է երկխոսություն՝ ինչեցյալի եւ Քրիստոսի միջեւ: Տապանագրի նման ձեւակերպումը, որ փոխադրվում էր հիմնականում հոգեւոր դասի ներկայացուցիչների տապանաքարերին, մեծմասամբ հանդիպում է ուշ միջնադարում: Ըստ էության, այն նպատակ է ունեցել ոչ միայն ընդգծելու մարդու՝ առ Աստված ունեցած հավատը, այլեւ վերջինիս՝ Աստծո կամոք անդրաշխարհում «լուսավորությամբ փառավորվելը»: Իսկ «ՀԱՆԳՈՅ ՀՈԳԻՆ» բառակապակցությունը նշանակում է անձի հանդերձյալ աշխարհ փոխվելը, որն ըստ քրիստոնեական դավանանքի հակասական է հնչում, քանզի ինչպես նշվում է Հակոբոս առաքյալի ընդհանրական թղթերից մեկում՝ «մեռած է մարմինը առանց հոգիի, այնպէս ալ մեռած է հաւատքը առանց գործերու»[22]: Կարծում ենք, որ տապանագիր ձեւակերպողը «ՀԱՆԳՈՅ ՀՈԳԻՆ» ասելով այստեղ նկատի է ունեցել, առհասարակ, մարդ - անհատի անդրաշխարհ փոխվելը:

Դեռ միջնադարում մարդիկ մտածել են իրենց մերձավորների հոգու փրկության մասին, մանավանդ որ սարսափած են եղել Նեռի ուրվականով եւ Քրիստոսի Երկրորդ գալստյան ժամանակ ունենալիք ահեղ դատաստանով[23]: Նման բնույթի բազմաթիվ ձեւակերպումներ կան նվիրատվական արձանագրությունների անեծքի բաժնում: Այն տեղ է գտել նաեւ տապանագրերում, որոնցից մեկը հենց Ս. Հռիփսիմեի վանքի գերեզմանատանն է (1,60 X 0,57): Տապանագիրն ութ տողից է, որոնցից առաջին վեցի սկզբնամասը՝ մոտ երեք տառ, կորրված է.

[ՔՍ] ԱԾ ՔՈ ԱՆՀՈՒՆ/[ՈՂ]ՈՐՄՈՒԹԼԵԱՄ]ԲԴ
ԵԴ ԹՈ/ ... ՐԴ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՆԻ/ ...
[Թ]ԱՍՑԻՍ ԱՆԱՆՈՒՆ ԵԼԻ]/ ... ՅԻՇԵԱ ՋՀՈԳԻ ՍԲՑ/

[ԱՐԴԵ]ԱՄԲԴ ԳՆԵԱԼ ԾԼԱ]ՈԼԱ]ՅԻՍ/ ՔՍ Ի
ՄԻԻՍ ԱՆԳԱՄ ԿՐԿ/ՆԱԿԻ ԳԱԼՍՏԵԱՆԴ ՔՈ:

(Նկ. 12)

21 «Հայերէն բացատրական բառարան», կազմեց՝ Սպ. Մալխասեանց, հ. երկրորդ, Երեւան, 1944, էջ 215:

22 «Նոր կտակարան», Երուսաղէմ, 1981, էջ 662, նաեւ «Քրիստոնյան Հայաստան» հանրագիտարան, էջ 571:

23 Տես **Ս. Հարությունյան**, Անեծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երեւան, 1975, էջ 55-57, նաեւ Լ. Սարգսյան, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9-14-րդ դարեր), Երեւան, 2007, էջ 13:

Ընդօրինակումների ժամանակ մոտ 10 - 15 սմ հաստությամբ հողաշերտից մաքրեցինք եւս երկու տապանաքար, որոնց վրա փորագրված գրերն աչքի են ընկնում մտքի ինքնատիպ շարադրմամբ: Դրանցից առաջինը տիրացու Արութենի (Հարություն) տապանագիրն է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԻՐԱՅ⌈ՈՒ⌉/ ԱՐՈՒԹԵՆԻՆ
ՈՐ ՓՈԽԵՑԱ⌈Ի⌉/ ԱՌ ԱԾ ՆՈՐԱՅՀԱՍԱԿ/
ԵՒ ՆՈՐԱՅԲՈՒՍ ԲԱՋՈՒՄ/ ԿՄԿԻՑ ԵԹՈՂ
ԾՆՈՂԱՅ/ԸՆ ՈՐՈՒՑ ՈՐ Է ԱՇԱԿԵ⌊Ր⌋Տ:

(Նկ. 13)

«Նորահասակ» եւ «նորաբուս» բառերերը հուշում են, որ Հարությունը մահա-ցել է երիտասարդ հասակում՝ կսկիծ թողնելով ծնողների սրտում:

Նախորդի աջ կողմում երկրորդ տապանաքարն է, ուր հիշատակված է Տեր Զա-քարի որդի Կիրակոսը.

ՔՍ ՈՐԴԻ ՀՕՐ ՄԻ/ԱԾԻՆ ՀԱՆԳՈ
ԸՋ/ՀՈԳԻ ԿԻՐԱԿՈՍ⌊Ի⌋Ն/ ՈՐ Է ՈՐԴԻ
ՏՐ ԶԱՔԱ/ՐԻՆ ՎԱՂՃԱՆ ԵՂԵՒ/ Ի
ՌԲՃԺ ԹՎԻՆ (1761):

(Նկ. 14)

Գերեզմանատան հարավարեւելյան հատվածում են գտնվում օրորոցաձեւ երկու տապանաքար, երկուսի վրա էլ խնամքով փորագրված են հիշատակագրեր, որոնցից մեկը երկլեզվյան՝ հայերեն՝ չափածո եւ վրացերեն՝ արձակ:

Առաջինը Գրիգոր Ռաբունու մոր, թիֆլիսեցի Թահմազի կողակից Մարիամի տապանաքարն է (1,70 X 0,55), որի վրա փորագրված է չորս տողից կազմված հե-տեւյալ վկայագիրը.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԿՆՈՋ ԱՅՐԻՈՑ ՄԱՐԻԱՄԻՆ ՈՂՈՐՄԵԼԻՈՑ/ ՄԱՅՐ
ԳՐԻԳՈՐԻ ՐԱԲՈՒՆԻՈՑ, ԿԻՆ ԹԱՀՄԱՋԻՆ ԹԻՓԼԻՋՍԵՅԻ[Ո]Ց/

ՈՐՈՒՄ ՈՎ ՈՔ ՏԱՅ ՁՈՂՈՐՄԻՆ ԱԾ ԵՒ ԻԻՐՆ ՈՂՈՐՄԵՍՑ/ Ի
ՌՄԽԴ (1795) ԹՎԻՆ, Ե[Ի] ՍԵՊ[ՏԵՄԲԵՐ]ԺԵ (15): (Նկ. 15)

Առանձնապես կարեւոր է երկրորդ տապանաքարը (1,84 X 0,72)՝ երկլեզվյան (հայերեն, վրացերեն) տապանագրով: Հայերեն հատվածը ընդարձակ է եւ չափածո, իսկ վրացերենը՝ համառոտ եւ արձակ:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ[ԱՆՆԱ] ԱՆՈՒՆ ԿՆՈՋ ԲԱ[ՐԻ]/
ԿՈՂԱԿՑԻ ԴԱՒԹԵ[Ա]Ն[ԲԵ]ՐՕՑԻ ԵՒ[ՄԱՅՐ] ԵՐԿՈՒՑ ՀԱՐԱՋԱՏ[Ի]/
ՆԱԽԿՆՈՑՆ ԴԱՒԻԹ Վ[Ա]ՐԴ[Ա]ՊԵՏԻ ՆԱԵՒ ԿՐՏՍԵՐՈՑՆ ԲԱՐՄԵՂԻ/
ԷՐ ՍԱ ԵՐԿՐԱՒ ՎՐԱՍՏԱՆՑԻ, ԲՆԻԿ ՏԵՂԵԱՒ ԷՆԱԳԵԹՑԻ/ ԽՆԴՐԷ Ի
ՁԷՆՋ ԵՂԲԱՐՔ ԲԱՐԻ, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՏԱՒ ՁՈՂՈՐՄԻ/
ՈՐ ՎԱՂՃԱՆԻ Ի ՌՄԼԳ (1784) ԹՈՒՈՋ Ի ՍԵՊ[ՏԵՄԲԵՐ]ԻԲ (22): (Նկ. 16)

Տապանագրում հիշատակված է Դավիթ Ե Էնագեթցի (1801 - 1807) Կաթողիկոսի մայր Աննան: Այս արձանագրությունը դեռ 1924 թ. ընդօրինակել եւ 1930 թ. հրատարակել է պրոֆեսոր Լեւոն Մելիքսեթ-Բեկը: Վերջինս, սակայն, 1950-ական թթ. կատարած իր հետազոտությունների ժամանակ տապանաքարը տեղում չի գտել[24]: Վրացագետ Պարույր Մուրադյանը այս տապանաքարը չի գտել եւ տապանագիրը վկայակոչել է՝ համաձայն Մելիքսեթ-Բեկի ժամանակին հրատարակած վերծանության[25]: Բարեբախտաբար, մեզ հաջողվեց գտնել տապանաքարը, ինչպես վերը նշեցինք Ս. Հռիփսիմեի վանքի արեւելյան պարսպից դուրս գտնվող գերեզմանատան հարավարեւելյան մասում: Տապանագրի մեր վերծանությունը լիովին համապատասխանում է Մելիքսեթ-Բեկի ընդօրինակմանը՝ բացառությամբ այն հանգամանքի, որ որոշ տառեր եւ նույնիսկ բառեր արդեն եղծվել են: Կարծում ենք, որ տապանաքարը շրջված է եղել, քանի որ շրջակայքում կան եւս նմանատիպ մոտ վեց օրորոցաձեւ տա-պանաքարեր, որոնք շրջված են[26]: Հավանական է, որ քարի վրայի

24 Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Սուրբ Հռիփսիմեի եւ Սուրբ Գայանեի վանքերի երկլեզվյան չափածո տապանագրերը, «Էջմիածին», 1959, Դ, էջ 34:

25 Տե՛ս **Պ. Մ. Մուրադյան**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները. Աղբյուրագիտական քննություն, Երեւան, 1977, էջ 91:

26 Չենք բացառում, որ շրջված տապանաքարերի հակառակ կողմերում եւս կարող են լինել տապանագրեր:

առկա կոտրվածքները, որ խաթարում են տապանագիրը, առաջացած լինեն հենց շրջվելու արդյունքում:

Դառնալով տապանագրի բովանդակությանը նկատենք, որ Աննան Դավթի մայրն է, որ վերջինիս վարդապետության շրջանում տեղափոխվել է Էջմիածին՝ որդու մոտ եւ այստեղ էլ մահացել 1784 թվականին: Ըստ Պ. Մուրադյանի՝ տապանագրի վրացերեն ամփոփման պատճառը նկատելի էնագեթցի[27] լինելն ու վիրահայոց ու վրաց շրջանում տոհմի ունեցած ճանաչումն է[28]: Տապանագրում հիշատակված են նաեւ Աննայի ամուսին «Դաւթեան Բերոն» եւ կրտսեր որդի Բարսեղը:

Հարկ ենք համարում մեջբերել տապանագրի նաեւ վրացերեն տարբերակի հայերեն թարգմանությունը.

ԱՅՍ ՏԱՊԱՆԸ ԷՆԱԳԵԹՑԻ ԲԵՐՈՅԻ ԱՄՈՒՍԻՆ ԱՆՆԱՅԻՆՆ Է, ՈՂՈՐՄԻ ԱՄԵՔ[29]:

Այս տապանաքարն աչքի է ընկնում նաեւ արեւմտյան կողմում քանդակված գեղազարդ խաչապատկերով: Հիմնախաչի հորիզոնական թեւերի վերին աջ եւ ձախ անկյուններում առկա են մեկական, իսկ խաչի ստորին մասում, որտեղից դուրս է գալիս արմավազարդը, բուսական վարդյակների երեք գնդեր, որոնք հավերժության, կյանքի, երկրի ծագման խորհրդանիշը կամ հիմքն են, որից սկիզբ է առնում բուսական - կենացծառային կերպավորում ունեցող խաչը եւ արմավազարդը[30]:

Վերոնշյալ տապանագրերից մի մասը պատկանում են վիմագիր բանաստեղծության տեսակին. չափածո են եւ ունեն հանգավորում: Հայ վիմագիր բանաստեղծությունը ստեղծվել է դարերի ընթացքում ու կրել տարբեր ժամանակների կնիքը: Իբրեւ գրականության առանձին ենթատեսակ դրանք լինում են խոհա-փիլիսոփայական, ձոներգային-փառաբանական, հիշատակագրային-կենսագրական եւ այլն[31]: Դրանցում իր արտացոլումն են գտել հայ ժողովրդի կյանքի ընկերային-քաղաքական, իրավատնտեսական եւ այլ հանգամանքներ: Սկզբնական շրջանում լինելով առավել պարզունակ, հետագա դարերում դրանք հարստանում են գաղափարական ուղղվածությամբ, թեմատիկայով, փոքրագրման տեխնիկայով եւ այլն[32]:

Այսպիսով, Ս. Հռիփսիմեի վանքի գերեզմանատան վերը բերված տապանագրերի բովանդակությունը որոշ չափով լրացնում է մեր իմացությունը Վաղարշապատի կրոնական կյանքի մասին:

Հետագա ուսումնասիրությունների ժամանակ մենք կփորձենք շրջել տապա-նա--քա-րերը եւ գրե--րի առկայության դեպքում դրանք ենթարկել համապատասխան քննության:

27 Էնագեթը գյուղ է Վրաստանի Քվեմոքարթլիի շրջանում:

28 Տե՛ս Պ. Մ. Մուրադյան, անդ, էջ 92:

29 Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, անդ, էջ 34, նաեւ Պ. Մ. Մուրադյան, անդ, էջ 92:

30 Տե՛ս Հ. Լ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանու-թյունը, Երեւան, 2008, էջ 284:

31 Տե՛ս Գր. Մ. Գրիգորյան, Հայկական վիմագրություն, Երեւան, 2000, էջ 58:

32 Տե՛ս Ս. Ա. Գեորգյան, անդ, էջ 8: